ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հոկտեմբերի 2021 թվականի №---Ա
ք.Երևան

«ՌԻՆԷ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ №0220 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՀԱՅՏԸ ՄԵՐԺԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №250Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի №199Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՌԻՆԷ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՌԻՆԷ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հոկտեմբերի 8-ին հայտով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մինչև 2029 թվականի մայիսի 1-ը երկարաձգել Հանձնաժողովի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի №250Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված՝ Որոտան գետի վրա գոյություն ունեցող ջրաթափային պատվարի աջ ափին կառուցված «Ռինէ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0220 լիցենզիայի գործողության ժամկետը, որը լրանում է 2021 թվականի հոկտեմբերի 27-ին: Միաժամանակ ընկերությունը հայտնել է, որ ջրօգտագործման թույլտվությունը ստանալուն պես այն կներկայացվի Հանձնաժողով, ինչը մինչև օրս չի կատարվել,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15

աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտից 13 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի հոկտեմբերի 11-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի հոկտեմբերի 15-ի գրությամբ, ըստ էության, ընդունել է թույլ տրված Կարգի խախտումը, և հայտնել, որ միջոցներ կձեռնարկի հետագայում նման խախտումներ թույլ չտալու համար,

ե) Կարգի 77-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված արտադրության ժամանակահատվածի երկարաձգման հայտը, ի թիվս այլնի, պետք է պարունակի նաև ջրօգտագործման թույլտվությունը,

զ) Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման հայտը մերժում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում օրենքների, նույն կարգի կամ այլ իրավական ակտերի պահանջներին,

է) «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու դեպքում,

ը) «Ռինէ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0220 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 8-ի հայտի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերը թերի են և չեն համապատասխանում գործող իրավակարգավորումների պահանջներին: Մասնավորապես՝ Ընկերության կողմից չի ներկայացվել Կարգով պահանջվող ջրօգտագործման թույլտվությունը: Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից Ընկերությունը չի հանդիսանալու Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձ, իրավիճակի փոփոխությամբ պայմանավորված ընկերության նկատմամբ 2021 թվականի հոկտեմբերի 11-ից Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետը, 12-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը, , Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել «ՌԻՆԷ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 8-ին Հանձնաժողով ներկայացված №0220 լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝

1) 2006 թվականի հոկտեմբերի 27-ի «ՌԻՆԷ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ռինէ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» 250Ա որոշումը,

2) 2021 թվականի մայիսի 26-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №199Ա որոշման 1-ին կետի 10-րդ ենթակետը:

3. Կարճել Հանձնաժողովի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 11-ից «ՌԻՆԷ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ «ՌԻՆԷ» փոքր հիդրոէլեկտրայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության նոր լիցենզիա ստանալու դեպքում «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված՝ փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի ժամկետ չի հաշվարկվի:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հոկտեմբերի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
- հոկտեմբերի 2021թ.